



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

### «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-29-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

#### «Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեություն կազմակերպելու և իրականացնելու, փաստաբանական մասնագիտական միավորում ստեղծելու և այն կառավարելու, անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու կարգերը, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունում փաստաբանական գործունեության հետ կապված այլ հարաբերություններ:»:

**Հոդված 2.** Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունը «քաղաքացիական դատավարության» բառերից հետո լրացնել «, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) այն դեպքերի, երբ անձը վճարովի կամ անվճար հիմունքներով ներկայացնում է այն իրավաբանական անձի շահերը, որի կանոնադրական կապիտալի քսան և ավելի տոկոս բաժնետոմսերը կամ բաժնեմասը պատկանում է իրեն կամ իր մերձավոր ազգականին (ազգականներին):»:

**Հոդված 4.** Օրենքի 9-րդ հոդվածում՝



1) 1-ին մասի 2-րդ կետում «փաստաբանների պալատի նախագահին, խորհրդի անդամներին և սույն օրենքի 39.5-րդ հոդվածով նախատեսված անձանց» բառերը փոխարինել «փաստաբանների պալատի նախագահին և փաստաբանների պալատի խորհրդի անդամներին» բառերով.

2) 4-րդ մասից հանել «և սույն օրենքի 39.5-րդ հոդվածով նախատեսված անձանց» բառերը.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մաս.

«11. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի նիստի օրակարգի, նրա աշխատանքը սկսվելու օրվա, ժամի (հեռակա քվեարկության դեպքում՝ տևողության), ինչպես նաև տեղի (վայրի) մասին փաստաբանները ծանուցվում են առնվազն տասն օր առաջ՝ փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում և առնվազն երկու հազար տպաքանակ ունեցող մամուլում հրապարակվելու միջոցով:»:

**Հոդվածի 5.** Օրենքի 9.1-րդ հոդվածի 1-ին մասում «Փաստաբանների պալատի նախագահի, փաստաբանների պալատի խորհրդի անդամների և սույն օրենքի 39.5-րդ հոդվածով նախատեսված անձանց» բառերը փոխարինել «Փաստաբանների պալատի նախագահի և փաստաբանների պալատի խորհրդի անդամների» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 10-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով՝

«Փաստաբանների պալատի խորհրդի անդամ կարող է ընտրվել առնվազն երկու տարվա փաստաբանական ստաժ ունեցող փաստաբանը: Սույն օրենքի իմաստով փաստաբանական ստաժ է համարվում փաստաբանական գործունեության արտոնագիր ստանալուց հետո մինչև դրա դադարումն ընկած



ժամանակահատվածը, որի մեջ չի ներառվում փաստաբանի գործունեության արտոնագրի գործողության կասեցված լինելու ժամանակահատվածը:»:

2) 5-րդ մասում՝

ա. 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) փաստաբանների պալատի նախագահի կամ խորհրդի անդամի առաջարկով՝ իրավասու պետական մարմիններին առաջարկություններ է ներկայացնում օրենքների և իրավական այլ ակտերի փոփոխությունների, լրացումների, դրանց ընդունման վերաբերյալ, ինչպես նաև նույն կարգով իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիք է տալիս նախագիծ մշակող մարմիններին.»:

բ. 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի առաջարկությամբ հաստատում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հանրային պաշտպանի գրասենյակի ծախսերի նախահաշիվը (բյուջետային հայտը)՝ պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.».

գ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 14.1-րդ կետ.

«14.1) սահմանում է փաստաբանների կողմից Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի անվանումը և խորհրդանիշն օգտագործելու կարգը».

3) 7-րդ և 8-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«7. Փաստաբանների պալատի խորհրդի նիստերը կարող են անցկացվել նիստին խորհրդի անդամների ներկա գտնվելու կամ հարցման միջոցով: Փաստաբանների պալատի խորհրդի անդամները նիստերին մասնակցում են անձամբ:

Փաստաբանների պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է (այդ թվում՝ հարցման միջոցով) անդամների առնվազն կեսը:



8. Հարցման միջոցով նիստն անցկացնելու համար փաստաբանների պալատի խորհրդի նախագահը խորհրդի սահմանած կարգով և ժամկետում խորհրդի անդամներին է ուղարկում հարցման ծանուցումը, այդ թվում՝ օրակարգի հարցերը, ինչպես նաև առաջարկվող որոշումների նախագծերը և նյութերը: Խորհրդի անդամները խորհրդի սահմանած կարգով և ժամկետում խորհրդի նախագահին են ուղարկում իրենց դիրքորոշումը (կողմ կամ դեմ)՝ յուրաքանչյուր հարցի վերաբերյալ:».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ և 13-րդ մասեր.

«9. Հարցման միջոցով չի թույլատրվում խորհրդի նիստն անցկացնել սույն հոդվածի 5-րդ մասի 7-րդ, 9-րդ, 10-րդ, 13-րդ և 14-րդ կետերում նշված հարցերով:

10. Փաստաբանների պալատի խորհրդի նիստերի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, իսկ հարցման միջոցով խորհրդի համապատասխան որոշումը համարվում է ընդունված, եթե հարցման վերաբերյալ դիրքորոշում հայտնած խորհրդի անդամների պարզ մեծամասնությունը կողմ է արտահայտվել որոշումն ընդունելու վերաբերյալ:

11. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումները ստորագրում է փաստաբանների պալատի խորհրդի նախագահը:

12. Փաստաբանների պալատի խորհրդի որոշումը շահագրգիռ անձի կողմից կարող է դատական կարգով վիճարկվել այդ որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում, բացառությամբ սույն օրենքի 39.7-րդ հոդվածի 8-րդ մասի:

13. Փաստաբանների պալատի աշխատակից հանդիսացող խորհրդի անդամը խորհրդի անդամի իր լիազորություններն իրականացնելիս անկախ է փաստաբանների պալատի նախագահից և այլ աշխատակիցներից:»:

#### **Հոդված 7. Օրենքի 12-րդ հոդվածում՝**

1) 2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.



«1) փաստաբանների պալատի կանոնադրությամբ սահմանված կարգով ընտրված հինգ անդամ, որոնցից մեկը նույն կարգով նշանակվում է որակավորման հանձնաժողովի նախագահ».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«Փաստաբանների պալատի որակավորման հանձնաժողովի որոշումը շահագրգիռ անձի կողմից կարող է բողոքարկվել փաստաբանների պալատի խորհրդին կամ դատարան՝ այդ որոշման ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում:»:

### **Հոդված 8.** Օրենքի 13-րդ հոդվածում՝

1) 8-րդ մասում՝

ա. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) սահմանում է փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատողների ծառայողական լիազորությունների շրջանակը, այդ թվում աշխատակազմի ներքին կարգապահական կանոնները.».

բ. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) սույն օրենքով նախատեսված դեպքերում ուժը կորցրած է ճանաչում փաստաբանի արտոնագիրը.».

գ. 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13) կազմում և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության միջոցով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում անվճար իրավաբանական օգնության տրամադրման փոխհատուցման ֆինանսական հայտերը.».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 12-րդ մաս.

«Փաստաբանների պալատի նախագահի որոշումը շահագրգիռ անձի կողմից կարող է դատական կարգով վիճարկվել այդ որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ մեկ ամսվա ընթացքում:».



3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 13-րդ մաս.

«Փաստաբանների պալատի աշխատակազմի ղեկավարը փաստաբանների պալատի նախագահի գրավոր որոշման հիման վրա իրականացնում է փաստաբանների պալատի նախագահի՝ աշխատակազմի կառավարման լիազորություններից բխող գործողությունները»:

**Հոդված 9.** Օրենքի 15-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 15. Փաստաբանների պալատի գույքը և բյուջեն**

1. Փաստաբանների պալատի գույքը ձևավորվում է փաստաբանների հավակնորդների մուտքավճարներից, փաստաբանների անդամավճարներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցներից:

2. Փաստաբանների պալատի խորհուրդը հերթական տարվա համար հաստատում է փաստաբանների պալատի բյուջեն (առանց հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող գումարների և ծախսերի)՝ հաշվետու տարվան նախորդող տարվա վերջին եռամսյակում:

3. Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հերթական տարվա բյուջեն չհաստատվելու դեպքում՝ փաստաբանների պալատը գործում է հաշվետու տարվան նախորդող տարվա բյուջեով:»:

**Հոդված 10.** Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «բացառությամբ սույն օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ և 5-րդ կետերով նախատեսված լիազորությունների» բառերը:

**Հոդված 11.** Օրենքի 17-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Փաստաբան է այն անձը, որն ունի իրավաբանի (բակալավրի, մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի) որակավորում և ստացել է



համապատասխան արտոնագիր՝ փաստաբանական գործունեություն իրականացնելու համար: Փաստաբանի կարգավիճակը հաստատվում է փաստաբանների պալատի կողմից տրված արտոնագրով և վկայականով:»:

2) 3-րդ մասում «այլ» բառը փոխարինել «ցանկացած» բառով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ մաս.

«5. Փաստաբանների պալատի հետ փոխհարաբերություններում փաստաբանը համարվում է իր հետ կապված գործընթացի վերաբերյալ պատշաճ ծանուցված նաև այն դեպքում, եթե ծանուցումն ուղարկվել է նրա էլեկտրոնային փոստի հասցեով, և առկա է այն կարգալու մասին էլեկտրոնային հավաստում: Եթե փաստաբանը չունի էլեկտրոնային հասցե և փոստային ծառայության միջոցով հնարավոր չէ ծանուցել փաստաբանին կամ սույն մասին համապատասխան ծանուցագիր ուղարկող Փաստաբանների պալատի աշխատակիցը կամ մարմինը եռօրյա ժամկետում չի ստանում ծանուցումը կարգալու մասին էլեկտրոնային հավաստում, կամ ծանուցագիրը փոստային կապի միջոցով ուղարկելուց հետո՝ տասնչորսերորդ օրը, հետադարձ ծանուցում չի ստացվում (այսուհետ՝ ծանուցումն ապահովելը չի հաջողվում), ապա ծանուցումը հրապարակվում է փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում: Տվյալ դեպքում փաստաբանը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը տեղադրվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:»:

**Հոդված 12.** Օրենքի 17.1-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի առաջին նախադասությունից հանել «փաստաբանների պալատի կանոնադրությամբ նախատեսված կարգով» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ և 4-րդ մասեր.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգով հավատարմագրված այլ պետության փաստաբանի կարգավիճակը հավասարեցվում է փաստաբանի կարգավիճակին, որն օգտվում է փաստաբանի



բոլոր իրավունքներից՝ բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի, և կրում է բոլոր պարտականությունները:

4. Այլ պետության փաստաբանն իրավունք չունի մասնակցելու փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին, այդ թվում՝ հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովին, ընտրելու և ընտրվելու պալատի մարմիններում և փաստաբանների պալատի նախագահ:»:

### **Հոդված 13.** Օրենքի 19-րդ հոդվածում՝

1) 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) մուծել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած չափով և ժամկետում անդամավճար յուրաքանչյուր հաջորդ մեկ տարվա համար՝ կանխավճարի կարգով, եթե վճարման այլ կարգ նախատեսված չէ փաստաբանների պալատի խորհրդի որոշմամբ: Փաստաբանը փաստաբանի գործունեության արտոնագիրը ստանալուց հետո առաջին մեկ տարվա ընթացքում փաստաբանի անդամավճարի կանխավճարները փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով վճարում է եռամսյակային կտրվածքով.».».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 9-րդ և 10-րդ կետերով.

«9) փաստաբանների պալատի աշխատակազմին տրամադրել իր բնակության կամ գործունեության վայրի հասցեի և էլեկտրոնային փոստի հասցեի մասին տեղեկություններ, ինչպես նաև փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքի համար անհրաժեշտ լուսանկար.

10) իր բնակության կամ գործունեության վայրի հասցեի կամ էլեկտրոնային փոստի հասցեի յուրաքանչյուր փոփոխության մասին մեկ ամսվա ժամկետում տեղեկացնել փաստաբանների պալատի աշխատակազմին՝ փաստաբանների պալատի հետ կապն ապահովելու, ինչպես նաև նրա անձնական գործում և փաստաբանների ցուցակում տվյալ փոփոխությունները ներառելու նպատակով: Սույն կետում նշված փոփոխությունների մասին փաստաբանների պալատին





չտեղեկացնելու դեպքում՝ նախորդ հասցեով ուղարկված ծանուցումը համարվում է պատշաճ ծանուցում:»:

**Հոդված 14.** Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի՝

1) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) տվյալ գործին մասնակցել է որպես դատավոր, դատախազ, քննիչ, հետաքննության մարմնի աշխատող, փորձագետ, տուժող կամ վկա, ինչպես նաև եթե նա հանդիսացել է պաշտոնատար անձ, որի իրավասության մեջ էր մտնում տվյալ անձի՝ վեճի առարկային առնչվող շահերից բխող որոշման ընդունումը, արբիտր կամ հաշտարար.».».

2) 3-րդ կետում « տվյալ անձի գործի քննությանը» բառերը փոխարինել «տվյալ գործի քննությանը» բառերով.

3) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5-րդ կետ.

«5) պետք է ներկայացնի վստահորդի շահերը ընդդեմ փաստաբանների պալատի, եթե իրավաբանական օգնություն տրամադրելու պահին փաստաբանը հանդիսանում է կամ նախորդող 5 տարիների ընթացքում հանդիսացել է փաստաբանների պալատի խորհրդի կամ որակավորման հանձնաժողովի անդամ, կամ փաստաբանների պալատի աշխատակազմի աշխատող»:

**Հոդված 15.** Օրենքի 26-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 26. Փաստաբանական գործունեության կազմակերպական-իրավական ձևերը**

1. Փաստաբանը փաստաբանական գործունեությունը՝ որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար կարող է հաշվառվել որպես անհատ ձեռնարկատեր կամ ընտրել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով առևտրային կազմակերպության համար



նախատեսված ցանկացած կազմակերպական-իրավական ձև (այսուհետ՝ փաստաբանական կազմակերպություն):

2. Փաստաբանական կազմակերպությունները օգտվում են սույն օրենքով սահմանված փաստաբանի երաշխիքներից և փաստաբանի իրավունքներից, բացառությամբ դատավարական այն իրավունքների, որոնք կարող է իրականացնել միայն ֆիզիկական անձ հանդիսացող փաստաբանը: Փաստաբանական կազմակերպությունները կրում են նաև փաստաբանի պարտականությունները այնքանով, որքանով այդ պարտականություններն իրենց էությամբ կիրառելի են իրավաբանական անձանց համար:

3. Սույն օրենքի իմաստով փաստաբանական կազմակերպություն է հանդիսանում փաստաբանական գործունեություն իրականացնող այն կազմակերպությունը, որի կանոնադրական կապիտալի հարյուր տոկոսը պատկանում է փաստաբանին (փաստաբաններին) և տվյալ կազմակերպության գործադիր մարմնի ղեկավարը հանդիսանում է փաստաբան: Սույն մասում նշված պահանջներին չհամապատասխանող կազմակերպությունը չի համարվում փաստաբանական կազմակերպություն և չի օգտվում փաստաթղթերի և տեղեկատվական կրիչների անձեռնմխելիության և փաստաբան չհանդիսացող իր աշխատակիցներին որպես վկա հարցաքննելու անձեռնմխելիության երաշխիքներից, ինչպես նաև իր անվանման մեջ «փաստաբան» բառն (դրա բոլոր հոլովածները կամ այդ բառը ներառող բառակապակցություններն) օգտագործելու իրավունքից:

4. Փաստաբանական կազմակերպության մասնակից փաստաբանի արտոնագրի գործողությունը կասեցնելու դեպքում, տվյալ անձը կարող է երեք ամսվա ընթացքում իր մասնաբաժինը կառավարման տրամադրել այլ փաստաբանի և կառավարման պայմանագրի պատճենը ներկայացնել փաստաբանների պալատին:



5. Փաստաբանական կազմակերպության մասնակից փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու դեպքում, տվյալ անձը կարող է երեք ամսվա ընթացքում իր մասնաբաժինը օտարել այլ փաստաբանի և մասնաբաժնի փոխանցման համապատասխան փաստաթղթի պատճենը ներկայացնել փաստաբանների պալատին:

6. Փաստաբանական կազմակերպության մասնակից փաստաբանի մահվան կամ օրենքով սահմանված կարգով մահացած ճանաչվելու դեպքում, տվյալ փաստաբանի ժառանգը կարող է երեք ամսվա ընթացքում ժառանգաբար իրեն հասաց մասնաբաժինը օտարել այլ փաստաբանի և մասնաբաժնի փոխանցման համապատասխան փաստաթղթի պատճենը ներկայացնել փաստաբանների պալատին:

7. Սույն հոդվածի 4-րդ, 5-րդ, և 6-րդ մասերում նշված ժամկետում փաստաբանների պալատին համապատասխան փաստաթուղթը չներկայացնելու դեպքում, կազմակերպությունը համարվելու է փաստաբանական կազմակերպության կարգավիճակից զրկված՝ սույն հոդվածում նշված իրավական հետևանքներով:»:

**Հոդված 16.** Օրենքի 27-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

**«Հոդված 27. Փաստաբանների վարքագծի կանոնները**

1. Փաստաբանի վարքագծի կանոնները պարտադիր են բոլոր փաստաբանների համար:

2. Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովը հաստատում է փաստաբանի վարքագծի կանոնագիրքը, որով սահմանվում են սույն օրենքով սահմանված փաստաբանի վարքագծի կանոնների անհրաժեշտ մանրամասները:

3. Փաստաբանական կազմակերպությունները և փաստաբանները պարտավոր են օժանդակ անձնակազմի (փաստաբան չհանդիսացող աշխատակիցներ՝ հաշվապահ, վարորդ, օգնական և այլն, այսուհետ՝ օժանդակ անձնակազմ) հետ կնքված աշխատանքային պայմանագրերում նախատեսել նրանց



պարտականությունները՝ փաստաբանի վարքագծի կանոնագրքի՝ փաստաբանական գաղտնիքը չհրապարակելուն և վստահորդի ու այլ անձանց միջև շահերի բախում առաջացնող գործողություններ չիրականացնելուն առնչվող պահանջները պահպանելու վերաբերյալ, և հետևել դրանց պահպանմանը»:

4. Փաստաբանը պետք է ձգտի իր գործունեությամբ և վարքագծով ապահովել փաստաբանական գործունեության անկախությունը, իսկ Վարքագծի կանոնների մեկնաբանությունն ու կիրառումը պետք է նպաստեն այդ նպատակի իրականացմանը:

5. Փաստաբանի գրավոր հարցման հիման վրա Փաստաբանների պալատի խորհուրդը պարզաբանում է տալիս փաստաբանի վարքագծի կանոնի կիրառության վերաբերյալ:

6. Փաստաբանն առնվազն պարտավոր է.

1) լինել անկախ, զերծ մնալ իր մասնագիտական պարտականությունների կամ վստահորդի գործի նկատմամբ բացասաբար ազդող շփումներից.

2) լինել բարեխիղճ, իր գործողություններով երբևէ կասկածի տակ չդնել փաստաբանի հեղինակությունն ու ազնվությունը.

3) դրսևորել հարգալից վերաբերմունք դատարանի նկատմամբ.

4) պահպանել փաստաբանական գաղտնիքը.

5) չիրականացնել փաստաբանական գործունեության հետ անհամատեղելի գործունեություն.

6) ապահովել վստահորդի շահերի գերակայություն՝ օրենքի և վարքագծի կանոնագրքին համապատասխան:

**Հոդված 17.** Օրենքի 29-րդ հոդվածի չորրորդ մասում «28-րդ և 33-րդ հոդվածներով» բառերը փոխարինել «33-րդ հոդվածով» բառերով:



**Հոդված 18.** Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասում «ազնիվ և բարեխիղճ» բառերը փոխարինել «ազնիվ, անկախ և բարեխիղճ» բառերով:

**Հոդված 19.** Օրենքի 33-րդ հոդվածում՝

1) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Փաստաբանի կարգավիճակ ձեռք բերելու և որպես փաստաբան գործունեություն իրականացնելու սահմանափակումները».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3-րդ կետ.

«3) տառապում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ փաստաբանական գործունեությանը խոչընդոտող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով»:

**Հոդված 20.** Օրենքի 34-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում է փաստաբանների ցուցակը»:

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանի գործունեության արտոնագիր ունեցող փաստաբանին կամ փաստաբանական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող օտարերկրացի փաստաբանին ընդգրկում է համապատասխանաբար՝ փաստաբանների ցուցակում և այլ պետության փաստաբանների ցուցակում»:

**Հոդված 21.** Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝



«1. Սույն օրենքի 36-րդ կամ 39.9-րդ հոդվածներով նախատեսված որևէ հիմքով արտոնագիրն ուժը կորցրած ճանաչվելու դեպքում՝ փաստաբանը հանվում է փաստաբանների ցուցակից:».

2) 2-րդ մասում «Փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ փաստաբանը» բառերը փոխարինել «Փաստաբանը» բառով:

#### **Հոդված 22.** Օրենքի 36-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ կետով.

«7) առկա է սույն օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հիմքը.».

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«4. Արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով այն ստանալու պահից մեկամսյա ժամկետում: Այն դեպքում, երբ արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը հանձնել հասցեատիրոջը (ծանուցումն ապահովելը չի հաջողվում), ապա սույն մասում նշված բողոքարկման ժամկետը հաշվարկվում է արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու մասին որոշումը փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելու օրվան հաջորդող հինգերորդ օրվանից:».

3) Ուժը կորցրած ճանաչել 5-րդ մասը.

4) Լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մաս.

«7. Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցման կամ սույն օրենքի 38-րդ հոդվածով նախատեսված կասեցման դեպքում վերջինիս խնդրանքով նրան է վերադարձվում մնացած ամիսների համար նախորոք վճարված անդամավճարի մասը: Անդամավճարի վերադարձման կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:».

#### **Հոդված 23.** Օրենքի 38-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում՝



ա. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) առողջական վիճակի պատճառով ի վիճակի չէ կատարել իր մասնագիտական պարտականությունները՝ մեկ տարուց ավելի ժամանակով, եթե առկա են այդ հանգամանքը հավաստող համապատասխան փաստաթղթեր, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով.»,

բ. 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) անցել է հանրային ծառայության կամ նշանակվել է նոտար՝ պաշտոնավարման կամ նոտարական գործունեության ողջ ժամկետի ընթացքում, բայց ոչ ավելի, քան 5 տարի ժամկետով, բացառությամբ երբ սույն հոդվածով նախատեսված կարգով սահմանվել է կասեցման անորոշ ժամկետ».

2) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Սույն հոդվածի 1-ին մասի 1-4-րդ կետերով նախատեսված հիմքերի առկայության մասին փաստաբանը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում տեղյակ պահել փաստաբանների պալատին: Սույն մասում նշված ժամկետը խախտելը հիմք է փաստաբանի արտոնագրի գործողությունը դադարեցնելու համար».

3) 6-րդ մասում «մասնակցելու պալատի մարմինների և նախագահի ընտրություններին» բառերը փոխարինել «մասնակցելու փաստաբանների պալատի ընդհանուր ժողովին, այդ թվում՝ հեռակա կարգով անցկացվող ընդհանուր ժողովին, ընտրելու և ընտրվելու պալատի մարմիններում և պալատի նախագահ:» բառերով.

4) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Փաստաբանը սույն մասով նախատեսված դիմումը պարտավոր է փաստաբանների պալատ ներկայացնել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը վերանալուց հետո ոչ ուշ, քան մեկ ամսվա ընթացքում: Սույն մասում նշված ժամկետը խախտելու դեպքում կետանցված ժամանակահատվածի համար փաստաբանի նկատմամբ վերահաշվարկվում է անդամավճարը՝ կրկնապատկված չափով:».

5) 9-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝



«9. Կասեցված արտոնագրի գործողությունը վերականգնած փաստաբանը պարտավոր է անցնել վերապատրաստման դասընթացներ՝ փաստաբանների պալատի խորհրդի սահմանած ժամաքանակով, եթե նա սահմանված կարգով չի անցել վերապատրաստման դասընթացները արտոնագիրը կասեցված լինելու ժամանակահատվածում:»:

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10-րդ և 11-րդ մասերով՝

«10. Մինչև սույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված կասեցման առավելագույն հինգ տարվա ժամկետը լրանալը, արտոնագիրը կասեցրած փաստաբանը կարող է գրավոր դիմել փաստաբանների պալատի նախագահին՝ կասեցման որոշակի ժամկետը անորոշ ժամկետով փոխարինելու համար: Նշված դիմումի տրման պահից կասեցման որոշակի ժամկետը համարվում է անորոշ ժամկետով փոխարինված: Սույն մասում նշված դեպքում արտոնագիրը կասեցրած փաստաբանը պարտավոր է վճարել անդամավճար խորհրդի կողմից սահմանված անդամավճարի հիսուն տոկոսի չափով՝ սկսած դիմումը ներկայացնելու պահից մինչև կասեցված արտոնագրի վերականգնումը ընկած ժամանակահատվածի համար:

11. Սույն հոդվածի 10-րդ մասում նշված անորոշ ժամկետով կասեցված արտոնագրի գործողությունը վերականգնած փաստաբանը անորոշ ժամկետով կասեցման ժամանակահատվածի համար անհրաժեշտ լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցում է անվճար:»:

**Հոդված 24.** Օրենքի 39.1-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետ.

«6) փաստաբանների պալատի այն աշխատակցի զեկուցագիրը, որն իր աշխատանքային գործառույթներն իրականացնելիս ձեռք է բերել փաստաբանի կողմից սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու վերաբերյալ տեղեկություն:».





**Հոդված 25.** Օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեց ամսվա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

1) խախտումը կրում է շարունակվող բնույթ, կամ

2) դիմողը օբյեկտիվորեն չէր կարող իմանալ փաստաբանի կատարած հնարավոր խախտման մասին՝ պայմանով, որ դիմողը խախտման մասին իմանալուց հետո երեք ամսվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան կարգապահական պատասխանատվության հիմքը ծագելուց երկու տարի հետո, դիմում է փաստաբանների պալատ:

Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթ չի կարող հարուցվել, իսկ խախտմամբ հարուցված վարույթը ենթակա է կարճման: Կարգապահական վարույթ հարուցվելու օրվանից սույն մասով նախատեսված վաղեմության ժամկետը կասեցվում է: Վաղեմության ժամկետի խախտմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել նաև փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ՝ մինչև կարգապահական գործը խորհրդին հանձնելը:»:

**Հոդված 26.** Օրենքի 39.5-րդ հոդվածի՝

1) 1-ին և 2-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Կարգապահական վարույթի գործը փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստում են փաստաբանների պալատի աշխատակազմի համապատասխան աշխատողները (այսուհետ՝ գործը նախապատրաստող անձ), որոնց թվաքանակը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:



2. Կարգապահական վարույթի գործերի բաշխումը գործը նախապատրաստող անձանց միջև կատարվում է փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված կարգով:».

2) 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Կարգապահական վարույթը սահմանված կարգով կասեցվելու դեպքում սույն մասում նախատեսված երկամսյա ժամկետը ևս կասեցվում է»:

**Հոդված 27.** Օրենքի 39.6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 39.6. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործի քննության կարգը**

1. Փաստաբանների պալատի խորհուրդը կարգապահական գործն ըստ էության քննող և վերջնական որոշում կայացնող մարմինն է:

2. Գործը նախապատրաստող անձի եզրակացությունը ստանալուց հետո տասնօրյա ժամկետում փաստաբանների պալատի նախագահը՝ հաշվի առնելով փաստաբանների պալատի խորհրդի անդամների ծանրաբեռնվածությունը և մասնագիտացումը, կարգապահական գործը հանձնում է փաստաբանների պալատի խորհրդի անդամին, որն այդ գործը փաստաբանների պալատի խորհրդում քննելիս հանդես է գալիս որպես նիստը նախագահող (սույն գլխում այսուհետ՝ նիստը նախագահող):

3. Փաստաբանների պալատի նախագահը փաստաբանների պալատի խորհրդի կողմից կարգապահական գործի քննությանը չի մասնակցում:

4. Կարգապահական գործը վարույթ ընդունելուց հետո 10 օրվա ընթացքում, նիստը նախագահողը նշանակում է փաստաբանների պալատի խորհրդի նիստ և փաստաբանների պալատի աշխատակազմի միջոցով նիստի տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցում է փաստաբանին, ում նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ, դիմող կողմին, իսկ անհրաժեշտության դեպքում՝



վկաներին և կարգապահական վարույթին մասնակցող այլ անձանց: Պատշաճ ծանուցված անձանց չներկայանալը արգելք չէ գործի քննության համար:

5. Դիմող կողմը պարտավոր է իր հասցեի փոփոխության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել փաստաբանների պալատի խորհրդին: Դիմող կողմի նշած հասցեով ուղարկված ծանուցումը համարվում է պատշաճ ծանուցում:

6. Կարգապահական գործը քննող պալատի խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է խորհրդի անդամների առնվազն կեսը:

7. Կարգապահական գործը քննող փաստաբանների պալատի խորհրդի նիստի ձայնագրառումը կամ արձանագրության վարումը, ինչպես նաև անհրաժեշտ այլ կազմակերպչական գործողություններն իրականացնում է փաստաբանների պալատի աշխատակազմը:

8. Կարգապահական գործն ավարտվելուց հետո արխիվացվում է և առնվազն հինգ տարի ժամկետով պահվում է փաստաբանների պալատում:

9. Փաստաբանների պալատի խորհուրդը կարող է իր նախաձեռնությամբ լրացուցիչ ապացույցներ կամ բացատրություններ պահանջել կողմերից կամ գործը նախապատրաստող անձից:

10. Փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը պալատի խորհուրդը քննում է ողջամիտ ժամկետում, բայց ոչ ավելի, քան գործը ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում: Կարգապահական վարույթը սահմանված կարգով կասեցվելու դեպքում սույն մասով նախատեսված վեցամսյա ժամկետը ևս կասեցվում է»:

### **Հոդված 28.** Օրենքի 39.7-րդ հոդվածում՝

1) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասություններով.

«Որոշումը, ինչպես նաև նիստի արձանագրությունը ստորագրում են նիստը նախագահողը և նիստի քարտուղարը: Այն դեպքում, երբ խորհրդակցական



սենյակում ընդունված որոշմանը դեմ է քվեարկել նիստը նախագահողը, ապա նիստը նախագահողի փոխարեն խորհրդի որոշումն ստորագրում է խորհրդի այլ անդամ: Որոշումը կողմերին ուղարկվելուց հետո հրապարակվում է փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում, բացառությամբ դռնփակ նիստերով կայացված որոշումների, որոնց դեպքում հրապարակվում է միայն որոշման բնույթը և եզրափակիչ մասը:».

2) 8-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պալատի խորհրդի որոշումը կողմերը կարող են բողոքարկել դատական կարգով՝ պալատի խորհրդի որոշումը ստանալու օրվանից՝ մեկամսյա ժամկետում: Այն դեպքում, երբ հնարավոր չի լինում Պալատի խորհրդի որոշումը հանձնել հասցեատիրոջը (ծանուցումն ապահովելը չի հաջողվում), ապա սույն մասում նշված բողոքարկման ժամկետը հաշվարկվում է Պալատի խորհրդի որոշումը փաստաբանների պալատի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվելուն հաջորդող հինգերորդ օրվանից:».

3) 9-րդ և 10-րդ մասերը ճանաչել ուժը կորցրած:

### **Հոդված 29.** Օրենքի 39.9-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու տույժի միջոց նշանակված լինելու դեպքում անձը պարտավոր է անցնել վերապատրաստման դասընթացները փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված ժամանակահատվածում, իսկ նման ժամանակահատված սահմանված չլինելու դեպքում՝ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումն օրինական ուժի մեջ մտնելու պահից՝ վեց ամսվա ընթացքում:».

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5. Փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի խորհուրդը կարող է նշանակել՝



1) դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում.

2) մեկ տարվա ընթացքում երեք անգամ կարգապահական տույժի ենթարկված փաստաբանի կողմից կարգապահական խախտում թույլ տալու դեպքում, անկախ կարգապահական տույժը մարված լինելու փաստից.

3) եթե փաստաբանը չի վճարել անդամավճարի առնվազն կեսը և վճարման կետանցը գերազանցում է 90 օրը.

4) եթե փաստաբանը չի վճարել անդամավճարի ամբողջ գումարը և վճարման կետանցը գերազանցում է 180 օրը».

3) 6-րդ մասի 1-ին կետում «մտնելուց հետո» բառերը փոխարինել «մտնելու» բառով:

**Հոդված 30.** Օրենքի 40-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«Հոդված 40. Կարգապահական գործի քննության արագացված կարգը**

1. Փաստաբանի նկատմամբ սահմանած ժամկետում անդամավճար չվճարելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելիս փաստաբանների պալատի նախագահը կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնում է փաստաբանների պալատի խորհրդին:

2. Վերապատրաստում չանցնելու հիմքով կարգապահական վարույթ հարուցելիս փաստաբանների պալատի նախագահը կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնում է փաստաբանների պալատի խորհրդի երեք անդամներին (սույն հոդվածի իմաստով այսուհետ՝ խորհրդի կազմ), բացառությամբ այն դեպքի, երբ կարգապահական վարույթի իրականացման արդյունքում փաստաբանի նկատմամբ կարող է նշանակվել փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը: Խորհրդի կազմի նիստն իրավագոր է, եթե ներկա են բոլոր երեք անդամները: Խորհրդի կազմը գործում է փաստաբանների պալատի խորհրդի անունից:



3. Փաստաբանների պալատի խորհուրդը (խորհրդի կազմը) սույն հոդվածով նախատեսված գործերը քննում է մեկ ամսվա ընթացքում:»:

**Հոդված 31.** Օրենքի 41-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15-րդ կետով.

«15) օտարերկրացիներին՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ, 8-րդ և 9-րդ մասեր՝

«7. Հանրային պաշտպանի գրասենյակը սույն հոդվածի 5-րդ մասում նշված անձանց հանրային պաշտպանությունը կարող է կազմակերպել նաև՝

1) հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների, փաստաբանական դպրոցի ունկնդիրների, ինչպես նաև կազմակերպությունների իրավաբանների միջոցով, որոնք ընդգրկվել են հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող անձանց ցուցակում: Անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող անձանց ցուցակում ընդգրկվելու, ինչպես նաև այդ ցուցակը համալրելու կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը.

2) հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների միջոցով դատական ներկայացուցչության իրականացմամբ, որի դիմաց վճարումները կատարվում են հանրային պաշտպանի համար նախատեսված միջոցների խնայողության հաշվին, ինչպես նաև սույն օրենքի 45-րդ հոդվածի 11-րդ մասով նախատեսված հատուկ ֆոնդի միջոցներից (այսուհետ՝ հատուկ ֆոնդ):

8. Սույն հոդվածի 7-րդ մասում նշված իրավաբանական օգնության տրամադրման կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:

9. Փաստաբանների պալատը վարում է նաև անվճար իրավաբանական օգնություն (դատական ներկայացուցչություն կամ քրեական գործերով պաշտպանություն) տրամադրելու պատրաստակամություն հայտնաձև հանրային



պաշտպան չհանդիսացող փաստաբանների ցուցակը: Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը նշված ցուցակում ներառված անձի համաձայնությամբ կարող է գործը հանձնել վերջինիս՝ անվճար իրավաբանական օգնություն տրամադրելու համար:

10. Յուրաքանչյուր տարվա ավարտին Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը և փաստաբանների պալատը իրենց պաշտոնական ինտերնետային կայքերում հրապարակում են այն փաստաբանների և փաստաբանական կազմակերպությունների ցանկը, որոնք մեկ տարվա ընթացքում առնվազն հինգ քրեական, քաղաքացիական, վարչական կամ սահմանադրական գործերով տրամադրել են անվճար իրավաբանական օգնություն»:

**Հոդված 32.** Օրենքի 42-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով.

«4. Հանրային պաշտպանի գրասենյակը պետք է Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում ունենա առնվազն մեկ աշխատանքային գրասենյակ»:

**Հոդված 33.** Օրենքի 43-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«Հոդված 43 Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը**

1. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարին փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ նշանակում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ առնվազն հինգ տարվա փաստաբանական ստաժ ունեցող անդամների կազմից, երեք տարի ժամկետով:

2. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ փաստաբանների պալատի խորհրդի կողմից՝ խորհրդի անդամների



ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Փաստաբանների պալատի խորհրդի կողմից հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝ հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը կհամարվի լուծված:

3. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը՝

1) ներկայացնում է հանրային պաշտպանի գրասենյակը.

2) կազմակերպում է սույն օրենքով նախատեսված դեպքերում յուրաքանչյուրի համար հավասարապես մատչելի և արդյունավետ իրավաբանական օգնության իրականացումը.

3) կատարում է աշխատանքի բաժանում հանրային պաշտպանների միջև.

4) ընդունում է որոշումներ հանրային պաշտպանի գրասենյակի բնականոն գործունեությունն ապահովելու ուղղությամբ.

5) քրեական վարույթն իրականացնող մարմնի դիմումի կամ որոշման հիման վրա կամ սույն օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում քաղաքացու դիմումի հիման վրա որոշում է կայացնում հանրային պաշտպանություն իրականացնելու և գործը հանրային պաշտպանին կամ հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանին հանձնելու մասին կամ հանրային պաշտպանության իրականացնելու և դիմումը մերժելու մասին, երբ առկա չեն սույն օրենքի 41-րդ հոդվածով նախատեսված հիմքերը: Հանրային պաշտպանության իրականացումը մերժելու մասին հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումը պետք է լինի պատճառաբանված.

6) հսկողություն է իրականացնում հանրային պաշտպանների և սույն օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ և 9-րդ մասերում նշված անձանց կողմից իրավաբանական օգնություն իրականացնելու որակի և ժամկետների նկատմամբ.





7) միջնորդություն է ներկայացնում հանրային պաշտպանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու կամ հանրային պաշտպանին խրախուսելու համար.

8) կարող է դիմել պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին կամ տնտեսվարող սուբյեկտներին անվճարունակ անձանց անվճարունակության փաստն ստուգելու, ինչպես նաև անվճար իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ տեղեկություններ ստանալու համար: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են հնգօրյա ժամկետում անհատույց տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ պահանջվող փաստաթղթերը օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում.

9) փաստաբանների պալատի նախագահի սահմանած կարգին համապատասխան ապահովում է՝

ա. հանրային պաշտպանի գրասենյակին հասցեագրված դիմումների հաշվառումը և քննարկումը,

բ. իրավաբանական օգնություն տրամադրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումների հաշվառումը,

գ. հանրային պաշտպանների կողմից փաստաբանական վարույթները ճիշտ կազմելու նկատմամբ հսկողությունը,

դ. ավարտված վարույթների ժամանակին արխիվացումը,

ե. հաշվետվությունների և վիճակագրության ներկայացումը՝ փաստաբանների պալատի նախագահին:

4. Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի որոշումները կարող են բողոքարկվել փաստաբանների պալատի նախագահին կամ դատական կարգով՝ որոշումը ստանալու պահից՝ տասնհինգօրյա ժամկետում:»:



**Հոդված 34.** Օրենքի 44-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 3-րդ մասով.

«3. Հանրային պաշտպանի հետ կնքվում է որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիր: Հանրային պաշտպանի՝ իր համաձայնությամբ կամ նախաձեռնությամբ, սահմանված աշխատաժամանակը գերազանցող աշխատանքը արտաժամյա չի համարվում:»:

**Հոդված 35.** Օրենքի 45-րդ հոդվածում.

1) 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Հանրային պաշտպանի և հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի համար օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափին հավասար գումարի չափով: Սույն օրենքի 41-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետում նշված դեպքում փաստաբանների պալատի նախագահը կարող է ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրեր կնքել հանրային պաշտպանի գրասենյակում չընդգրկված փաստաբանների հետ:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ, 10-րդ և 11-րդ մասեր.

«9. Յուրաքանչյուր տարի հանրային պաշտպանի գրասենյակի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից: Պետական բյուջեով նախատեսված հատկացման չափի ֆինանսավորումը կատարվում է ամսական հավասար համամասնությամբ՝ յուրաքանչյուր ամսվա համար կանխավճարի կարգով:

10. Փաստաբանների պալատը, պարզելով, որ հանրային պաշտպանի գրասենյակը անվճար իրավաբանական օգնություն է տրամադրել վճարունակ անձին, կարող է դատական կարգով տվյալ անձից պահանջել հօգուտ պետական բյուջեի բռնագանձել փաստաբանի իրավաբանական օգնության հետ կապված



ողջամիտ վճարը, որը որոշվում է սույն օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասում նշված գնացուցակի հիման վրա:

11. Հատուկ ֆոնդի միջոցները գոյանում են՝

1) սույն հոդվածի 10-րդ մասում նշված կարգով հոգուտ պետական բյուջեի բռնագանձված գումարներից.

2) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:»:

**Հոդված 36.** Օրենքի 45.1 հոդվածի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Փաստաբանական դպրոցը»:**

**Հոդված 37.** Օրենքի 45.2 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում «գործունեություն» բառը փոխարինել «գործառույթներ» բառով:

**Հոդված 38.** Օրենքի 45.4 հոդվածի 4-րդ մասի՝

1) 1-ին կետից հանել «, դրա վճարման կարգը» բառերը.

2) 4-րդ կետից հանել «հավակնորդների» բառը, իսկ «ծրագրերը» բառը փոխարինել «պլանները» բառով:

**Հոդված 39.** Օրենքի 45.5 հոդվածի 2-րդ մասի՝

1) 6-րդ կետում ծրագրերը» բառը փոխարինել «պլանները» բառով.

2) 7-րդ կետում «հրահանգներ» բառը փոխարինել «ընդունում է որոշումներ» բառերով:

**Հոդված 40.** Օրենքի 45.6 հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.



«1. Փաստաբանական դպրոցի ունկնդիր (հավակնորդ), բացառությամբ սույն հոդվածի 1.1 մասի, կարող է լինել այն գործունակ ֆիզիկական անձը, ով Հայաստանի Հանրապետությունում ստացել է իրավագիտություն մասնագիտությամբ բարձրագույն կրթություն (բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի ծրագրերով) և ունի իրավաբանի կամ իրավագետի որակավորում կամ նմանատիպ որակավորում ձեռք է բերել օտարերկրյա պետությունում, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումն իրականացվել է օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-րդ մասով.

«1.1 Փաստաբանական դպրոցի ունկնդիր (հավակնորդ) չի կարող լինել այն անձը, ով դատապարտվել է դիտավորությամբ կատարված հանցագործության համար, և նրա դատվածությունը մարված կամ հանված չէ, ինչպես նաև այն անձը, որի փաստաբանական գործունեության արտոնագիրը դադարեցվել է որպես կարգապահական տույժ, և չի լրացել սույն օրենքի 39.9-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ժամկետը:»:

**Հոդված 41.** Օրենքի 45.7 հոդվածում՝

1) 2-րդ մասի 3-րդ կետը «դպրոցից» բառից առաջ լրացնել «փաստաբանական» բառով.

2) 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. Ունկնդիրը կարող է իր նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշումը բողոքարկել փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդին կամ դատարան՝ որոշումը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:»

**Հոդված 42.** Օրենքի 45.8 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«Հոդված 45.8. Ուսուցումը փաստաբանական դպրոցում**



1. Ունկնդրի ուսուցումը փաստաբանական դպրոցում իրականացվում է փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ սահմանված կարգով և ժամկետներում: Ուսուցումն իրականացվում է երկու փուլով՝ տեսական ուսուցում և փորձուսուցում (մասնագիտական պրակտիկա):

2. Փաստաբանական դպրոցում ուսուցման ընդհանուր տևողությունը առնվազն վեց ամիս է, բայց ոչ ավելի, քան մեկ տարի:

3. Փաստաբանական դպրոցում ուսուցումը կարող է իրականացվել առկա և հեռավար (դիստանցիոն) ուսուցման ձևերով, որի կարգը սահմանում է Փաստաբանական դպրոցի կառավարման խորհուրդը:

4. Իրավաբանի՝ առնվազն հինգ տարվա մասնագիտական ստաժ ունեցող ունկնդրի, ինչպես նաև նախկին դատավորի, դատախազի ուսուցումն իրականացվում է փաստաբանական դպրոցի կանոնադրությամբ նախատեսված պարզեցված ընթացակարգով:»:

**Հոդված 43.** Օրենքի 45.9 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 45.9 Ունկնդրի փորձուսուցումը (մասնագիտական պրակտիկա)**

1. Ունկնդիրներն անցնում են պարտադիր փորձուսուցում: Փորձուսուցման տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով:

2. Փորձուսուցումը կազմակերպվում է ծրագրին համապատասխան, որում ընդգրկվում են պարտադիր կատարման ենթակա առաջադրանքներ՝ ըստ ուսումնական պլանում նշված ուղղությունների:

3. Փորձուսուցման անցկացման կարգը սահմանվում է փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի կողմից:»:

**Հոդված 44.** Օրենքի 45.10 հոդվածի 1-ին մասը «ունկնդրին» բառից հետո լրացնել «մեկ տարվա ընթացքում» բառերով:



**Հոդված 45.** Օրենքի 45.11 հոդվածի 1-ին մասը «ուսուցում անցած» բառերից հետո լրացնել «և հավաստագիր ստացած» բառերով:

**Հոդված 46.** Օրենքի 45.12 հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**«Հոդված 45.12 Փաստաբանների վերապատրաստման կազմակերպումը**

1. Փաստաբանը վերապատրաստում կարող է անցնել փաստաբանների պալատում, փաստաբանական դպրոցում կամ փաստաբանների պալատի խորհրդի կողմից հավատարմագրված այլ կազմակերպությունում:

2. Փաստաբանների վերապատրաստման կազմակերպման և անցկացման, սույն հոդվածի առաջին մասով սահմանված այլ կազմակերպության հավատարմագրման, ինչպես նաև փաստաբանների վերապատրաստման ժամաքանակի հաշվարկման կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:

3. Փաստաբանը պարտավոր է անցնել փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով վերապատրաստման դասընթացներ, որոնք չեն կարող տարեկան քսանչորս ակադեմիական ժամից պակաս լինել, բացառությամբ փաստաբանների պալատի խորհրդի կողմից սահմանված դեպքերի:

4. Վերապատրաստման դասընթացներին հավասարեցվում են փաստաբանների պալատի խորհրդի սահմանած կարգով և ժամաքանակով փաստաբանի կողմից մասնագիտական գիտական հոդվածների կամ դասագրքերի հրատարակումը, ինչպես նաև գիտաժողովներին մասնակցությունը:

**Հոդված 47. Անցումային և եզրափակիչ դրույթներ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից գործը նախապատրաստող անձանց լիազորությունները համարվում են դադարած: Մինչև սույն օրենքով նախատեսված՝



գործը նախապատրաստող անձանց նշանակվելը հարուցված կարգապահական վարույթներն իրականացվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նախատեսված կարգով:

3. Որակավորման հանձնաժողովի հինգերորդ անդամի ընտրությունը և որակավորման հանձնաժողովի նախագահի նշանակումը կատարվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում: Պալատի նախագահը պահպանում է որակավորման հանձնաժողովի նախագահի իր լիազորությունները մինչև սույն օրենքով սահմանված կարգով որակավորման հանձնաժողովի նախագահի նշանակումը:

4. Այն անձինք, ում կասեցված արտոնագրի գործողությունը մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով դադարեցվել է՝ պայմանավորված արտոնագրի գործողության կասեցման սահմանված ժամկետը լրանալու հետ, սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում կարող են դիմել փաստաբանների պալատ՝ արտոնագրի գործողությունը վերականգնելու համար: Սույն մասում նշված ժամկետում ստացված դիմումի հիման վրա փաստաբանների պալատի խորհուրդը պարտավոր է վերականգնել արտոնագրի գործողությունը և կասեցնել անորոշ ժամկետով, եթե առկա չեն Օրենքի 33-րդ հոդվածում նշված հիմքերը: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքով կասեցված արտոնագրի գործողությունը չի կարող դադարեցվել արտոնագրի գործողության կասեցման հինգ տարին լրանալու հիմքով, եթե արտոնագիրը կասեցրած անձը գրավոր դիմում է ներկայացնում կասեցման անորոշ ժամկետ սահմանելու համար:



## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

#### 1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանաքվեի արդյունքում ընդունվեց նոր ՀՀ Սահմանադրությունը, որով սահմանվում է՝ իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը: Փաստաբանների կարգավիճակը, իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների ցանկի 6.1 կետով նախատեսվում է բարեփոխումներ իրականացնել փաստաբանության ոլորտում, այդ թվում անվճար իրավաբանական օգնության տրամադրման իրավահարթություններում:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ նախագծով նախատեսվում է իրականացնել փաստաբանության համակարգի հերթական բարեփոխումները:

#### 2. Ընթացիկ իրավիճակը, կարգավորման նպատակը և բնույթը

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածը չի ընդգրկում բոլոր այն կարգավորման առարկաները, որոնք ամրագրված են գործող Օրենքով: Հետևաբար՝ առաջարկվում է վերախմբագրել նշված հոդվածն այնպես, որ բացառվեն կրկնությունները և ընդգրկվեն Օրենքով կարգավորվող բոլոր առարկաները:





Օրենքի 2-րդ հոդվածում ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը՝ որպես փաստաբանության օրենսդրության աղբյուր մատնանշված չէ, մինչդեռ այն պարունակում է մի շարք դրույթներ, որոնք անմիջականորեն վերաբերվում են փաստաբանությանը (դատարանի ներգործության միջոցների, ներկայացուցչության, ապացույցների ձեռքբերման վերաբերյալ փաստաբանի կարգավիճակի հետ կապված առանձնահատկությունները): Ուստի առաջարկվում է 2-րդ հոդվածում ավելացնել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը:

Հաշվի առնելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծով նախատեսվում է դատական ներկայացուցչությունը ոչ փաստաբանի կողմից կարող է կատարվել մերձավոր ազգականին (ազգականներին), կանոնադրական կապիտալի քսան և ավելի տոկոս բաժնետոմս կամ բաժնեմաս ունեցող անձի կողմից վճարովի կամ անվճար հիմունքներով իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելիս, համապատասխան կարգավորումները լրացվել են նաև սույն նախագծում:

Օրենքը չի նախատեսում փաստաբանների, փաստաբանների պալատի, փաստաբանական դպրոցի կամ փաստաբանական գրասենյակների կողմից այդ բառի օգտագործման ընթացակարգերը, ինչը հաճախ, օրինակ, փաստաբանների կողմից չարաշահվում է: Նախագծով առաջարկվում է Պալատի խորհրդին վերապահել փաստաբանների պալատի անվանումը և խորհրդանիշն օգտագործելու կարգը սահմանելու իրավասություն:

Օրենքով փաստաբանների պալատի խորհուրդը պալատի գործադիր, ինչպես նաև կարգապահական վարույթ իրականացնող մարմինն է: Հաշվի առնելով խորհրդին վերապահված լիազորություններն անհրաժեշտ է, որ փաստաբանների պալատի գործադիր և կարգապահական գործերը քննող մարմնի կազմում ընդգրկվեն առնվազն որոշակի փաստաբանական ստաժ ունեցող փաստաբաններ: Ուստի նախագծով փաստաբանների պալատի խորհրդի անդամ համար սահմանվում է մասնագիտական գործունեության ցենզ: Ստաժի հետ կապված



կարգավորումներ կան, ինչպես պալատի նախագահի, այնպես էլ ՀՊԳ ղեկավարի հարցում, ինչն իրավաչափ է: Մասնավորապես, «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 13-րդ և 43-րդ հոդվածների ուժով Պալատի նախագահի և հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի համար նախատեսված է առնվազն 10 տարվա փաստաբանական ստաժ: Ուստիև նախագծով Պալատի խորհրդի անդամի համար ևս նախատեսվել է որոշակի փաստաբանական ստաժ ունենալու պարտադիր պայման:

Հաշվի առնելով Պալատի խորհրդի գերծանրաբեռնված աշխատանքը, որը հիմնականում պայմանավորված է փաստաբանների թվի ավելացմանը զուգահեռ կարգապահական գործերի թվի և օրակարգային այլ հարցերի ավելացմամբ՝ նախագծով նախատեսվում է խորհրդին վերապահված մի շարք հարցերի քննարկումն իրականացնել ոչ միայն նիստերի, այլ հեռակա հարցման միջոցով: Սակայն հաշվի առնելով որոշակի հարցերի կարևորությունը, առանձին հարցեր չեն կարող այնուամենայնիվ նիստերի միջոցով պետք է քննարկվեն:

Օրենքով նախատեսված չէ Պալատի խորհրդի որոշման դատական բողոքարկման հնարավորություն (բացառությամբ կարգապահական պատասխանատվության վերաբերյալ որոշումների), նախագծով այդ բացը շտկվում է՝ համապատասխան լրացում կատարելով:

Օրենքով որակավորման հանձնաժողովի նախագահին ի պաշտոնե Պալատի նախագահին է: Հնարավոր շահերի բախումից խուսափելու նպատակով նախագծով առաջարկվում է, որ որակավորման հանձնաժողովի նախագահին ընտրվի հանձնաժողովի կազմից, իսկ Պալատի նախագահին առհասարակ մասնակցություն չունենա այդ հանձնաժողովի աշխատանքներին: Բացի այդ, նախագծով նախատեսվում է որակավորման հանձնաժողովի որոշումների բողոքարկման ընթացակարգ, այդ թվում՝ դատական կարգով, ինչը գործող օրենքով նախատեսված չէ:



Փաստաբանական գործունեության միջազգայնորեն ճանաչված սկզբունքներից մեկը դա շահերի բախումից խուսափելն է: Օրինակ, երբ նախորդ վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալու, կամ իր կարգավիճակով այլ անձի (կազմակերպության) հետ կապված տեղեկատվությունը կարող է ապագայում օգտագործվել այդ անձի կամ կազմակերպության դեմ իր վստահորդի շահերը ներկայացնելիս:

Նույնը պետք է վերաբերվի այն դեպքերին, երբ փաստաբանը իր վստահորդի շահերը ներկայացնում է մի կառույցի (փաստաբանների պալատի) դեմ, որի վերաբերյալ ունի կամ կարող է ունենալ (իր նախկին կարգավիճակով պայմանավորված) այնպիսի տեղեկատվություն, որն օգտագործելով իր վստահորդի շահերը ներկայացնելիս անբարեխիղճ արտոնություն կստեղծի նոր վստահորդի համար: Օրինակ՝ Պալատի խորհրդի անդամը, մասնակցում է խորհրդի որոշումների կայացմանը, իսկ հետագայում ներկայացնում է իր վստահորդի շահերը այդ որոշումները դատական կարգով վիճարկելիս:

Միջազգային պրակտիկան առհասարակ արգելում է հետագայում իր վստահորդի շահերը ընդդեմ Պալատի ներկայացնելը: Ֆրանսիայում արգելված է որոշակի ժամկետով նախկին խորհրդի անդամին դատական վեճով ներկայացնել պալատի հակառակորդ կողմին ընդդեմ պալատի: Նախագծի հեղինակները տվյալ դեպքում ողջամիտ են համարում ոչ թե ամբողջությամբ սահմանափակումը, այլ որոշակի՝ 5 տարվա ժամկետ սահմանելը:

Օրենքի 17.1-րդ հոդվածը չի կարգավորում օտարերկրյա փաստաբանի կարգավիճակը, հետևաբար անհասկանալի է դառնում օտարերկրյա փաստաբանի իրավունքները և պարտականությունները: Նախագծով առաջարկվում է կարգավորել վերջինիս կարգավիճակը և սահմանել օտարերկրյա փաստաբանի իրավունքները և պարտականությունները: Նրանց կարգավիճակը հավասարեցվում է ՀՀ փաստաբանի կարգավիճակին, սակայն նրանք իրավունք չունեն մասնակցելու



փաստաբանական պալատի կառավարչական գործառույթներին, քանի որ պալատի անդամ չեն հանդիսանում:

Փաստաբանի և փաստաբանների պալատի միջև գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով փաստաբանների պալատի աշխատակազմին տրամադրել իր բնակության կամ գործունեության վայրի հասցեի և էլեկտրոնային փոստի հասցեի մասին տեղեկություններ տրամադրելու պարտավորություն է նախատեսվում: Հաշվի առնելով, որ փաստաբաններն իրենց էլեկտրոնային հասցեները ներկայացնում են փաստաբանների պալատ, նախատեսվում է նաև փաստաբանին էլեկտրոնային եղանակով ծանուցման հնարավորությունը, ինչը կհեշտացնի ու կարագացնի ծանուցումների կազմակերպումը: Միաժամանակ հետագա տարբերակված մեկնաբանություններից խուսափելու համար նախագծով կարգավորվում է փաստաբանների պալատի կողմից իր անդամներին ուղարկվելիք ծանուցումների հետ կապված հարցերը, այդ թվում, երբ փաստաբանը կհամարվի պատշաճ ծանուցված: Եզակի չեն դեպքերը, երբ փաստաբանը փոխել է հասցեն և խզել է կապը Փաստաբանների պալատի հետ: Ուստի առաջարկվում է օրենքի 19-րդ հոդվածը լրացնել նոր կետով, որով փաստաբանը պարտավոր կլինի պալատին տեղեկացնելու բնակության և գործունեության վայրի փոփոխությունների մասին:

Հաշվի առնելով օրենսդրական բարեփոխումները, արբիտրայաժին և հաշտարարության կարգավորումների կիրառումը ՀՀ-ում, նախագծով նախատեսվում է, որ փաստաբանը իրավունք չունի իրավաբանական օգնություն ստանալու դիմած անձի հանձնարարականն ընդունել, եթե արբիտր կամ հաշտարար է եղել: Արբիտրը կամ հաշտարարը թեև դատավոր չեն, սակայն կողմերի միջև վեճի լուծումն են ապահովում, ուստի անհրաժեշտ է համապատասխան կարգավորում նախատեսել նաև նրանց համար:

Նախագծով սահմանվել են փաստաբանների վարքագծի կանոնների հիմնական սկզբունքները և դրանց կարգավորումները, որոնք պետք է ուղղորդիչ լինեն փաստաբանների վարքագծի կանոնագիրքը սահմանելիս: Փաստաբանների



վարքագծի կանոնների հիմնադրույթներում ներառվել է նաև փաստաբանի կողմից դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականություն: Դատավարական օրենսգրքերով դատավորի կողմից դատավարության մասնակիցների նկատմամբ օրինակ տուգանքի կամ նիստերի դահլիճից հեռացնելու սանկցիաներ կիրառելու լիազորություն է վերապահված, բացառությամբ փաստաբանի, քանի որ ի սկզբանե պատշաճ չէ փաստաբանի նկատմամբ նման սանկցիաներ կիրառելը: Դա պայմանավորված է այն հանագամանքով, որ փաստաբանն ունի վարքագծի կանոններ, ու ենթադրվում է, որ փաստաբանական էթիկան թույլ չի տալիս փաստաբանին դատարանում խախտումներ թույլ տալ: Արտոնագիրը դադարեցրած անձը այլևս փաստաբան չի հանդիսանում և նա ոչ թե պետք է դիմի արտոնագիր ստանալու, այլ ընդհանուր կարգով պետք է ընդունվի ՀՀ փաստաբանական դպրոց, հետևաբար վերը նշված մասում ընդհանուր կարգով պահանջ չսահմանելը գործնականում կարող է հանգեցնել տարատեսակ մեկնաբանությունների: Բացի այդ մեկ տարվա պահանջը հակասում է Օրենքի 39.9-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետով սահմանված երկու տարվա պահանջին, հետևաբար առաջարկվում է տվյալ մասը ճանաչել ուժը կորցրած, քանի որ փաստաբանի արտոնագիրը դադարեցվելուց հետո նա ընդհանուր կարգով պետք է ստանա փաստաբանական գործունեության արտոնագիր, որի կարգն արդեն իսկ սահմանված է օրենքի այլ հոդվածներով: Բացի այդ, նախագծով նախատեսվում է արտոնագիրն ուժը կորցրած ճանաչելու որոշման՝ դատական կարգով բողոքարկման հնարավորություն, ինչը գործող օրենքով նախատեսված չէ:

Օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը տառացի մեկնաբանելիս ստացվում է, որ փաստաբանը պետք է մեկ տարի հիվանդ լինի, որ նոր միայն իր արտոնագիրը կասեցնի, մինչդեռ փաստաբանը, եթե կարող է ներկայացնել համապատասխան բժշկական փաստաթղթեր, որ նա չի կարող աշխատել մեկ տարուց ավելի, ապա նա պետք է իրավունք ձեռք բերի կասեցնելու իր արտոնագիրը: Միաժամանակ նախագիծը նախատեսում է կասեցման հետ կապված



այլ բարեփոխումներ: Այդ թվում, նախագիծը թույլ է տալիս արտոնագիրը կասեցված փաստաբանին արտոնագրի կասեցման ժամանակահատվածում անցել սահմանված վերապատրաստումները, որպեսզի հետագայում արտոնագրի գործողությունը վերականգնելիս փաստաբանը ստիպված չլինի հիմնական վերապատրաստման ժամերը լրացնելու հետ մեկտեղ մասնակցելու կասեցված ժամանակահատվածի համար նախատեսված վերապատրաստումներին:

Օրենքի 39.1-րդ հոդվածով որպես կարգապահական վարույթի հարուցման հիմք նշված են միայն անձանց դիմումները, ՁԼՄ-ների հրապարակումները, ՀՊԳ ղեկավարի և հաշվապահի զեկուցագրերը (տեղեկանքները) և դատական սանկցիան, մինչդեռ վերը նշված առիթներով կարգապահական գործի քննության ժամանակ պարզվում է, որ փաստաբանի արարքում առկա են նաև փաստաբանի կողմից Օրենքի կամ վարքագծի կանոնագրքի այնպիսի պահանջների խախտման հատկանիշներ, որոնց առնչվել են օրինակ փաստաբանների պալատի աշխատակիցները՝ ի պաշտոնե իրենց լիազորություններն իրականացնելիս: Օրինակ, եթե փաստաբանների պալատի վերապատրաստման հարցերով աշխատակիցը հայտնաբերում է փաստաբանի կողմից վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության խախտման փաստ, ապա տվյալ դեպքում Պալատը այդ մասով կարգապահական վարույթի չի կարող հարուցել կարգապահական վարույթ հարուցելու առիթի բացակայության պատճառով: Գործող օրենքով նախատեսված առիթ է փաստաբանական դպրոցի տրամադած տեղեկանքը: Այդ կապակցությամբ նախագծով առաջարկվում է որպես կարգապահական վարույթ հարուցելու առիթ նախատեսել նաև փաստաբանների պալատի այն աշխատակցի զեկուցագիրը, որն իր աշխատանքային գործառույթներն իրականացնելիս ձեռք է բերել փաստաբանի կողմից սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու վերաբերյալ տեղեկություն:



Օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո: Փորձը ցույց է տալիս, որ գործող իրավակարգավորմամբ նախատեսված 1 տարվա ժամկետը գործնականում շատ քիչ է, հաշվի առնելով ՀՀ-ում դատարանի կողմից գործի քննության ժամկետները: Ուստի, եթե օրինակ փաստաբանը անբարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել՝ սխալ հայցապահանջ է ներկայացրել կամ լավ չի հիմնավորել հայցի հիմքը, ապա դրա մասին վստահորդը (չունենալով իրավաբանական կրթություն) կարող է օբյեկտիվորեն իմանալ վերջնական դատական ակտից, իսկ եթե այն իր հերթին վիճարկվում է, ապա՝ վերաքննիչ դատարանի կամ նույնիսկ՝ վճռաբեկ դատարանի դատական ակտից: Մինչդեռ, Հայաստանում դատական գործը միայն առաջին ատյանում միջինում ընթանում է մեկ տարի և ավելի: Ուստի տվյալ պարագայում, փաստորեն անձն այլևս զրկվում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցով Պալատ դիմելուց, իսկ փաստաբանն էլ իր հերթին ազատվում է հնարավոր կարգապահական պատասխանատվությունից: Ուստի նախագծով նշված ժամկետի հետ կապված նոր կարգավորումներ են սահմանվել:

Հարցը կարգավորված չէ շարունակական բնույթ կրող խախտման դեպքում: Ուստի նախագծով նախատեսված փոփոխությամբ հստակեցվել են կարգապահական վարույթ հարուցելու վաղեմության ժամկետները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրեցօր մեծանում է փաստաբանների թիվը, և դրա հետ զուգահեռ ավելանում են նրանց դեմ հարուցվող և քննվող կարգապահական վարույթների թիվը, օրենքով ներկայիս գործող՝ կարգապահական վարույթը նախապատրաստողների ինստիտուտը այլևս իրեն չի արդարացնում: Դա մի կողմից պայմանավորված է այն հանգամանքով, որ գործը նախապատրաստողները իրենց լիազորություն իրականացնում են հասարակական



հիմունքներով, և շարունակ աճող գործերի թիվը բերում է նրան, որ վերջիններս առհասարակ հրաժարվում են այդ լիազորությունից ժամանակի սղության պատճառով: Մյուս կողմից, վերջիններս հանդիսանում են փաստաբաններ, ուստի շատ դեպքերում չեն կարողանում օբյեկտիվորեն գործել, քանի որ հարցը վերաբերվում է իրենց գործընկեր փաստաբանին, և դա վերջիններիս կաշկանդում է արդյունավետ իրականացնել իրենց լիազորությունները և կարգապահական վարույթի համար հավաքել անհրաժեշտ ապացույցները: Կաշկանդող գործոնը հիմնականում դրսևորվում է նրանում, որ նախապատրաստող անձն ինքնուրույն է կազմում եզրակացությունը: Նախկին իրավակարգավորման պայմաններում, նախապատրաստողի փոխարեն գործում էր կարգապահական հանձնաժողովը, որը կոլեգիալ մարմին էր և կոլեգիալության գործոնը նվազեցնում էր փաստաբանի կաշկանդվածության աստիճանը: Այդ կապակցությամբ նախագծով առաջարկվում է կարգապահական գործի նախապատրաստման գործառույթը վերապահել փաստաբանների պալատի աշխատակազմի համապատասխան աշխատողներին, որոնք իրենց աշխատանքի համար կստանան վարձատրություն, ինչպես նաև կաշկանդված չեն լինի փաստաբանի վերաբերյալ կարգապահական գործի շրջանակներում ապացույց ձեռք բերելուց: Այդ կապակցությամբ նախագծով համապատասխան փոփոխություններ են նախատեսվել Օրենքի 39.5-րդ հոդվածում և դրա հետ անմիջական կապ ունեցող այլ հոդվածներում:

Համապարփակ կարգավորում է ստացել կարգապահական պատասխանատվության ենթարկելու գործերի քննության կարգը: Գործող օրենքով փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը կարող է կիրառվել միայն դիտավորությամբ կատարված ակնհայտ կոպիտ կարգապահական խախտման դեպքում: Միևնույն ժամանակ, օրենքով նախատեսվել են արտոնագրի գործողությունը դադարեցնելու մյուս հիմքերը: Օրինակ, մեկ տարվա ընթացքում երեք անգամ կարգապահական խախտում թույլ տված անձի կողմից կրկին անգամ





կարգապահական խախտում թույլ տալը, հանդիսանալու է արտոնագրի գործողության դադարեցման հիմք:

Պալատի խորհրդի աշխատանքների գերծանրաբեռնվածության պատճառով՝ նախագծով առաջարկվում է վերապատրաստման դասընթացներին չմասնակցելու հիմքով հարուցված կարգապահական վարույթների քննության պարզեցված ընթացակարգ: Դրանք պետք է քննվեն Խորհրդի 3 անդամի կողմից, բացառությամբ այն դեպքի, երբ վարույթի իրականացման արդյունքում կարող է նշանակվել արտոնագրի գործողության դադարեցման տույժը: Հաշվի առնելով Հայաստանի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունները՝ նախագծով նախատեսվում է անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք վերապահել նաև օտարերկրացիներին՝ արտաքսման վերաբերյալ որոշումը բողոքարկելու համար:

*«Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ռազմավարական ծրագրից բխող կարգավորումները իրենց ամրագրում են գտել նախագծում»*

1) հստակեցվել են հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները և ՀՊԳ ֆինանսավորումը:

2) անվճար իրավաբանական օգնության այլընտրանքային նոր կարգավորում է սահմանվել, ըստ որի օրենքով սահմանված խմբերին անվճար իրավաբանական օգնությունը կարող է տրամադրվել՝

- հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների, փաստաբանական դպրոցի ունկնդիրների, ինչպես նաև կազմակերպությունների իրավաբանների միջոցով, որոնք ընդգրկվել են հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվող անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող անձանց ցուցակում: Անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրող անձանց ցուցակում ընդգրկվելու, ինչպես նաև այդ ցուցակը համալրելու կարգը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը:



- հանրային պաշտպան չհանդիսացող փաստաբանների միջոցով դատական ներկայացուցչության իրականացմամբ, որի դիմաց վճարումները կատարվում են հանրային պաշտպանի համար նախատեսված միջոցների խնայողության հաշվին, ինչպես նաև օրենքով սահմանված հատուկ ֆոնդի միջոցներից:

3) բարեփոխվել են փաստաբանների պատրաստման և վերապատրաստման ընթացակարգերը:

Օրենքի 45.6-րդ հոդվածի 1-ին մասը չի նախատեսել օտարերկրյա պետության դիպլոմ ունեցող իրավաբանների՝ «Վ փաստաբանական դպրոց ընդունվելու հարցը, հետևաբար առաջարկվում է կարգավորել այդ հարաբերությունները:

### **3. Կարգավորման նպատակը և ակնկալվող արդյունքը**

Նախագծերի ընդունմամբ կհստակեցվեն օտարերկրյա փաստաբանների իրավունքների առանձնահատկությունները, փաստաբանների վերապատրաստման ընթացակարգերը, կընդլայնվի անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց շրջանակը, առավել համապարփակ կարգավորում կստանան մի շարք ընթացակարգային հարցեր:



### ՏԵՂԵԿԱՆՔ N 1

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ  
ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի կամ եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

### ՏԵՂԵԿԱՆՔ N 2

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ՀՀ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ  
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԱՆ ՄԱՍԻՆ**

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտությունը բացակայում է: